

## ...ԳԻՐՍ ՄՆԱ ՀԻՇԱՏԱԿՈՂ

Այսպիսի միջնադարյան իմաստություն է մեզ ժառանգություն թողել մի նշանավոր հայ գրիչ: -  
Գիրս մնա հիշատակող:

Երբ լսեցի Արտաշես Քալանթարյանի մահվան լուրը, ցնցվեցի, տառապեցի, կարծես նորից  
լսեցի եղբորս՝ Սամվելի մահվան բոթը, որ գնաց ծաղիկ հասակում:

Մեր Արտաշեսի կյանքն էլ «ծաղիկ հասակի» էր: Նա երբեք չծերացավ, թեև 59 տարեկանում  
հեռացավ մեր տնից, իր տնից՝ մեր հայոց աշխարհից:

Բայց հեռացա՞վ: Ոչ, ի՛նչ եմ ասում: Ուր հեռանա, երբ մեր գրական հարուստ ու  
նախաշխարհիկ գանձարանում ինքը եւս թողեց գրական ոչ քիչ արժեքներ:

Ծանոթացա, երբ պատանի էր՝ ուսանող, ցրիչ, տեխնիկական աշխատող:

- Ո՞ր գյուղի ծնունդ էս, Արտաշես:

- Երեւանի, - ասաց նա, - Ծնողներս ու պապերս Շամշադինից են:

Երբ հրատարակեց իր անդրանիկ գործը՝ «Առաջինը» գիրքը, ես տեսա, որ մեր գրական  
աշխարհը մուտք գործեց տաղանդավոր մի շահել: Երբ նրա հարսանիքն արինք, ես տեսա, որ  
մեր կիսավեր գերդաստանում մի ազնվական ընտանիք էլ է ստեղծվում: Երբ ծնվեց նրա  
առաջին թոռնիկը, աչքալուս արինք նրա մտերիմները, դե, նաեւ՝ ես:

- Օխտը տղայով սեղան նստես, Արտաշե՛ս:

Զարմանալի չէր նրա երգիծական ուժը: Դա հողի ուժն էր, մարդ արարածի հոգու ամենից  
գորավոր ուժը՝ դատափետել այն ամենը, ինչ անմարդկային վատ է ու վնասակար: Իսկ  
հիսնական թվականներին եւս մեր կյանքում այնքան վատ բաներ կային, որ մարդ ցնցվում էր՝  
էս ի՛նչ աշխարհում ենք ապրում մենք: Երբ, մի երկու տարի առաջ դիտեցի, լսեցի նրա  
«Մովսես ապերը» հեռուստատեսային պիեսը, նորից, այս անգամ եռապատիկ, ցնձացի մեր  
Արտաշեսի համար: - Ախ ես քո ցավը տանեմ, այդ ինչ բնական ուժ ունես՝ կռիվ չարի դեմ,  
կռիվ սոցիալական անարդարության դեմ: Կռիվ՝ մարդու համար:

Իսկ դրանից առաջ Քալանթարյանի «Մարաթոնը» հզոր նվաճում էր շատ տեղերում խեղված  
մեր գրականության համար:

Անսահման բարի մարդ էր մեր Արտաշեսը, ներող, ընկածին օգնող: Իրեն շատ  
դառնություններ պատճառեցին ե՛ւ անհատ մարդիկ, ե՛ւ պետական ու կուսակցական  
«ղեկավար» գլուխներ: Մակայն նա վատին վատությամբ չէր պատասխանում, այլ  
լավությամբ:

- Բնավ էլ խիզախություն չէ վատին վատությամբ ապտակելը, - ասում էր նա մեզ: - Վատություն անողին լավություն պիտի անել: Եթե նա մարդ է, կհասկանա: Իսկ եթե մարդ չէ, թքիր ու հեռացիր:

Մեր Արտաշեսը մեր ազգային արդար պայքարի քաջամարտիկ էր: Հիշում եմ 1965 թվականի ապրիլին Մեծ եղեռնի 50-ամյա սգատոնը նշելիս ինչպիսի խիզախությամբ նա եւս տեր կանգնեց Հայոց Դատին:

Հաճախ էինք գնում գյուղեր, աշխարհներ: Հատկապես իր հայրենի Շամշադինը: - Բա չփոխե՞նք այս անունը, հայկականը վերականգնենք: Փորձեցինք շատ անգամ: Սակայն պետական բյուրոկրատիան ոռնում էր մեր դեմ: Դե ի՞նչ, Արտաշեսը եւս տեսավ այդ վերափոխումը, Շամշադինը դարձավ Տավուշ՝ պատմականը, ազնիվը, արդարը:

Կյանքում ուրախ մարդ էր մեր Արտաշեսը: Գեղեցիկ էր արտաքին հատկանիշներով, սակայն այդ գեղեցկությունը պճնվում էր ներքին՝ հոգու մարդկային արդար լույսով, հոգեբանության ազնվությամբ, իր գրական արեւող փայլով: Հրաշալի երգում էր:

Հիմա մեր Արտաշեսը, ինձնից հետո եկած գրական սերնդի այդ ինքնուրույն ու հզոր տաղանդը, ընդամենը վաթսուն տարեկան է եւ... չկա՞: Ո՛չ, կա՞: Ապրում է Քալանթարյանը եւ կապրի շատ հարյուրամյակներ: Գիրը չի մեռնում:

- Գիրս դառնա հիշատակող:

Միրելի Արտաշես: Հիմա երկնքում ես: Իմացիր, ապրում ես քո պաշտելի ազգի հոգում, նրան նեցուկ՝ այս դժվարին վիճակում: Իմացիր՝ զիրդ դարձել է հիշատակող: Իսկ ով թեկուզ մի մասունք հիշատակ է թողնում հողի վրա, նա անմահ է:

## ՄԵՐՈ ԽԱՆՁԱԴՅԱՆ